№2

Մենք հասարակ ենք

Տեղեկատվական թերթիկ

Հուլիս 2008

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Մարզերում քարոզարշավը սկսվեց

Մեկնարկեց «Ունիսոն» ՀԿ-ի կողմից իրականացվող իրազեկության քարոզարշավը, որը ներառելու է հայաստանյան բոլոր 10 մարզերը: Ակնհայտ է, որ եթե Երևանում հաշմանդամների՝ հասարակական կյանքում ներգրավվածության ցուցանիշը ցածր է, ապա մարզերից շատերում այն գրեթե աննշան է: Կլոր սեղան-քննարկումները, որոնց մասնակցում են տեղական ինքնակառավարման մարմինների և հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչներ, առկա խնդիրների համատեղ լուծումների նախանշման հնարավորություն են ընձեռում:

Առաջին նման քննարկումը կայացավ հուլիսի 3-ին Արմավիրի մարզում: Հանդիպմանը ներկա էին մարզ-

պետարանի և քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց թվում էր Արմավիրի փոխմարզպետ Լարիսա Մուրադյանը: Քննարկվեցին ներառական կրթական համակարգի կիրառման, քաղաքաշինության և առողջապահության բնագավառներին առնչվող խնդիրները: Ներկաները հետաքրքրությամբ դիտեցին «Ունիսոնի» կողմից պատրաստված բազմագան տեսանյութերը:

Հաջորդ այցի ուղղությունը Սյունիքն էր՝ Հայաստանի ամենահեռավոր մարզը: Այս հանդիպումից ակնկալիքները հատկապես մեծ էին. Մեղրիում արդեն մոտ մեկ տարի գործում է «Ունիսոնի» առաջին մասնաճյուղը:

Սայլակավոր հաշմանդամների համար հարմարեցված մասնաճյուղի գրասենյակը, որը եզակի երևույթ է տվյալ մարզի համար, քաղաքաշինական բնույթի խոչընդոտների հաղթահարման գործուն օրինակ է: Կլոր սեղանի ընթացքում մեծ հետաքրքրություն առաջացրեցին հաշմանդամների զբաղվածության մակարդակի բարձրացման, հասարակության մեջ ծնավորված կարծրատիպային մտածելակերպի վերացման հարցերը: Մասնակիցները ողջունեցին «Ունիսոնի» առաջարկը՝ անցկացնել Սյունիքում բնակվող հաշմանդամների կարիքների գնահատում: Այն կբացահայտի հետազոտվողների սոցիալական դրության և նրանց՝ հասարակական կյանքում ներգրավվածության իրական պատկերը և կնպաստի իրավիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի մշակմանը:

Պատրաստվում են Օլիմպիական և Պարալիմպիկ խաղերին

Օլիմպիական խաղերի նախօրեին Պեկինի բնակիչները ստանալու են յուրօրինակ ձեռնարկ, որը պարունակելու է օտարերկրացիների հետ վարվելաձևի կանոններ:

Այսպես, յուրաքանչյուր պեկինցի այսուհետ հստակորեն կիմանա, որ հասարակական վայրերում չի թույլատրվում բղավել, հորանջել, քիթը քչփորել, գլուխը քորել, եղունգները մաքրել և օտարերկրացիների զգեստներին դիպչել: Ձեռնարկում նաև նշված են արտասահմանցիների հետ շփման ընթացքում արգելված 8 թեմաներ. եկամուտներ, տարիք, ընտանեկան և առողջական վիճակ, կրոնական համոզմունքներ և քաղաքական հայացքներ, մասնագիտություն և բնակության վայր: Անհասկանալի է միայն, թե էլ ինչի վերաբերյալ կարելի է խոսել վերջիններիս հետ:

Պարալիմպիկ խաղերի մասնակից հաշմանդամ օտարերկրացիների հետ փոքր-ինչ ավելի հեշտ կլինի շփվել. նրանց պետք է պարբերաբար հիշեցնել, որ իրենք «անկրկնելի» են:

Ձեռնարկում տեղ են գտել նաև հիրավի կարևոր խորհուրդներ. «Հաշմանդամին օգնելուց առաջ հարցրեք, արդյոք նա ունի դրա կարիքը: Ոչ մի դեպքում զոռով մի օգնեք»:

Բացի բնակչության տեսական նախապատրաստումից, Պեկինում նաև գործնական պարապմունքներ են կազմակերպվում: Հուլիսի 11-ին անցկացվեց այսպես կոչված «հերթերի օր», մեգապոլիսում ապրողները սովորում էին նստել հասարակական տրանսպորտ, պահպանելով հերթը, և ոչ թե ամբոխով հարձակվելով դռների վրա: Հարկ է նշել, որ պեկինցիներից շատերին այսպիսի կարգապահությունը դուր եկավ: Լավ կլիներ, որ նման վարվելակերպը դաստիարակություն ոչ միայն Չինաստանում, այլ նաև Հայաստանում:

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Իրավաբանի անկյուն
Հարց և պատասխան

Ինչպե՞ս և որտե՞ղ պետք է դիմել հաշմանդամի կարգավիճակ և հաշմանդամության խումբ ստանալու համար:

Մ.Բալյան, 42 տարեկան, Մեղրի

Հաշմանդամի կարգավիճակ ստանալու համար պետք է դիմել տարածքային պոլիկլինիկա, անցնել համապատասխան բժշկական զննություն, և ստանալով ուղեգիր (ձև 88) դիմել տեղական բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով (ԲՍՓՀ):

ԲՍՓՀ-ն անձին հաշմանդամ է ճանաչում ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան:

Անձի բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է նրա կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա, որը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին: Անձը դիմումի հետ միասին ներկայացնում է իր անձնագիրը: Այն դեպքում, երբ դիմումատուն անձի օրինական ներկայացուցիչն է, ապա նա ևս պետք է ներկայացնի անձնագիր: Մինչև 16 տարեկան երեխաների համար ներկայացվում է ծննդյան վկայականը, ծնողներից մեկի կամ խնամակալի (հոգաբարձուի) անձնագիրը: Բժշկասոցիալական փորձաքննության դիմումին կցվում են հիվանդության, վնասվածքի, խեղման հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումով պայմանավորված առողջության խաթարումը հաստատող բժշկական փաստաթղթերը, իսկ առաջին անգամ դիմելու դեպքում՝ նաև ուղեգիրը: Ինչ վերաբերում է հաշվառում չունեցող անձանց, ապա նրանք կարող են ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության՝ ներկայացնելով տեղեկանք փաստացի բնակության վայրից:

Եթե անձը, ելնելով առողջական վիճակից, չի կարող ներկայանալ փորձաքննության անցկացման վայր և դրա մասին նշել է դիմումում, ապա հանձնաժողովը բժշկասոցիալական փորձաքննությունը կարող է իրականացնել անձի գտնվելու վայրում (բնակության վայր կամ հիվանդանոց):

Իզաբելլա Կարապետյան,
«Ունիսոն» ՀԿ իրավաբան

Մասնակցե՛ք հաշմանդամ կանանց գեղեցկության 4-րդ ֆոտոմրցույթին

2004թ.-ից «Ունիսոնը» անցկացնում է 16-40 տարեկան հաշմանդամ կանանց և աղջիկների գեղեցկության ամենամյա ֆոտոմրցույթ: Մրցույթի նպատակն է ապացուցել, որ իսկական գեղեցկությունը ոչ մի պարագայում չի խամրում: Տարեցտարի մասնակիցների թիվը ավելանում է, իսկ մրցանակաբաշխության արարողությունը ավելի հանդիսավոր բնույթ է կրում:

Ընտրությունը կատարում է Հայաստանում հեղինակություն վայելող գործիչներից կազմված ժյուրին: Տարբեր տարիներին ժյուրիի կազմում ընդգրկվել են Երվանդ Երզնկյանը, Մարտին Կարդազարյանը, Աշոտ Ղազարյանը, Ֆորշը, Ալեքսանդր Գրիգորյանը և այլ հանրահայտ մարդիկ:

Բացի հիմնական՝ «Միս Գեղեցկություն» նոմինացիայից, սահմանվում են նաև այլ անվանակարգեր՝ «Միս ժպիտ», «Միս Նրբագեղություն», «Միս Հմայք»... Լավագույն տասնյակում ընդգրկված մասնակիցները պարգևատրվում են մրցանակներով:

Արդեն ընդունվում են 2008թ. մրցույթի հայտերը: Մասնակցե՛ք ֆոտոմրցույթին, և միգուցե հենց դուք կարժանանաք գլխավոր մրցանակին և Միս Գեղեցկություն - 2008 տիտղոսին:

Տեղեկությունների համար դիմեք (010) 52-21-70 հեռախոսահամարով:

«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը
հաշմանդամներին անվճար տրամադրում է

- զբաղվածության կենտրոնի ծառայություններ (տեղյուսների կազմում, հարցազրույցին նախապատրաստում և այլն)
- իրավաբանական խորհրդատվություն
- հոգեբանական աջակցություն

Անցկացվում են նաև կերպարվեստի պարապմունքներ:

52-21-70

Նախագիծն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի և Նյուքեսլանդիի Կառավարության ֆինանսական մասնակցությամբ

Ձեռքերին փոխարինեցին ոտքերը և դունչը

Ապշեցուցիչ կամքի տեր է ԱՄՆ-ի Իլինոյս նահանգի բնակիչ Ջիմ Գոլդմանը: Նա զբաղվում է որսով,

ձկնորսությամբ, մեքենա է վարում: Այս բոլոր գործողությունները նա կատարում է ոտքերի և դնչի օգնությամբ, քանի որ իր մոտ ի ծնե բացակայում են ձեռքերը:

Գլխավոր խմբագիր
Արմեն Ալավերդյան

Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան
Իզաբելլա Կարապետյան

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ, Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռ./Ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am